


U. U. UFSU 10-1

ԲԱՐԱԿԻ ՄԵԿՄԱՆ  
ՄԻԶՈՑԵՐԸ



ПРЕДСТАВЛЕНИЯ О СЕБЯ

324 P. J. H. L. P. H.

1120

at Mackinaw -




ԱՆԴՐԿՈՎԱԿԱՍԱՆ ԲԱՄԲԱԿԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ  
ՀԱՅՈՒԹՅՈՒՆԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

633.51

Մ. Մ. Միջազնու

ԻՆՉՊԵՍ ՄՃԱԿԵԼ ԲԱՄԲԱԿԱՅ, ՎՈՐ ՍՏԱՎԻ  
ԱՄԵՆԱԶԱՏ ԲԵՐՔ ՑԵՎ ՄԻԱՎԱՐԱՆԱԿ  
ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻՑ ՔԻՉ ՏՈՒԺԻ

A-  
1620



Ա. Խ. Խ. ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
Բայցիս 1939 թ.



Ա. Յ. Մամիկոնյանի անվան հրատարակություն. «Զարդար Վաստակաշեց» տպագործ

Պատճեն № 1072

Տարբերակ 2000

Պատճեն № 906

ԻՆՉՊԵՍ ՄԵԱԿԵԼ ԲԱՄԲԱԿԸ, ՎՈՐ ԱՏԱՏԻԿ ԱՄԵՆԱԾԱ  
ԲԵՐՔ ՅԵՎ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻՑ  
ԺԻՇ ՏՈՒԺԻ

Խելացի Հայունի յէ . մեկ Հեկտարից սուցվող Հուժ-բաժբակի քերը միահամար չե զոչ միայն մինչույն չը բանի , մարդի ուսու-  
ժաններում , այլ նույնիսկ մորեն զյուզում՝ տարրեր տնօւառ-  
թաններում : Այսպիս , մեզ մաս , Միաթրած մի քանի վայրերում  
մեկ Հեկտարից ապաս կերպով սուածում են մեկ , մեկ և կես , յեր-  
բան և յերկու տան Հուժ-բաժբակ (գետաշխից 60 , 90 և 120  
փութ) , իսկ ուրիշ տակերում միջին Հաշումը մեկ Հեկտարից Հայից  
կես տան են սուածում (գետաշխից 25-30 փութ) : Այդ տարրե-  
րությունը բացարձում ե զոչ միայն Հողերի տարրեր Հարաբու-  
թյունը , այլ և Հոգի զոչ միասնակ մշակումով , վուազելու . ջրի  
բանակությունը և այն ոպատործելու շնորհընք , և վերջապես ,  
զանազան վնասառանձերի գործ անելությունը , վարոնք բաժակա-  
ցանից խունը են քերքի շատ թե քիչ մասը : Խոսելով վնասառանձե-  
րի մասին , կարելի յեր թերեւս մտածել , զոր նրանց ուժեղ զար-  
գացման և բաժբակին հասցրած վնասների պատճառն այն և , զոր  
մենք բազմար չափուի և նորություն չենք կայում նրանց դեմ , կամ  
կարու և պատճառել , զոր դեռ չենք առարել կոմիտ և ծանոթ չենք  
այն թուառանոր կամ խեղզադ քիմիական նյութերի Հետ , վրանք  
մեր ժամանակներում արդար լրայն կերպով զործադրվում են  
զրւդառանձություն ուրիշ վնասառանձերի գեմ : Բայց այդ բա-  
րութին այլօքն չե . բաժբակի վնասառանձերին վաշնչացնելու հա-  
մար մեր արագագրության տակ կան բազմասնակ քիմիական  
նյութեր և մենք նրանց զարծագրելու մեր զիսենք . բայց նախ քան  
այդ քիմիական նյութերով բաժբակի վնասառանձերին վաշնչաց-  
նելու ժամանակակիր , անհրաժեշտ և հիշել այն Հայունի խուզը ,  
զոր առաւմ և՝ ամիելի հեշտ և առաջն տանիք , բայց բժիշկին և աշ-

իստել, վոր բամբակի արտերում բույսի աճման համար ստեղծվեն այնպիսի պայմաններ, վոր մեկ կողմից հնարավոր լինի ստանալ ամենաբարձր բերք, իսկ մյուս կողմից՝ անբարեհաջող լինեն վնասատուների մասսայական բազմացման համար։ Ստեղծյն, հնարավոր եւ այդ, թե վոչ։ Այս, հնարավոր եւ և վոչ միայն հնարավոր եւ, այլ և կինսապես անհրաժեշտ եւ այդ ցույց եւ տարիս մեր սրբակտիկան եւ մեր բամբակագործական հիմնական ըրջանների համեմատությունը. ինչպես հայտնի յէ, բամբակի բերքավայր թյան եւ այս կամ այն վնասատույի տարածման չափերը տարրեր չը աններում միատեսակ չեն։

Այսպես որինակ, Միության բամբակագործության մարդարարությունը հանդիսացող արեւոս նւզը կիսուանի պաղարեր Յուրդանի հովտում բամբակի բերքը հեկտարից միջին հաշվով լինում է մեկ և կեսից մինչև յերկու տոննից վոչ պակաս, իսկ հաճախ ավելիք բարձր։ Այսուղ կան առանձին անտեսատերներ, աչքի ընկնող բամբակարութներ, վորոնք իրենց դաշտերից ստանում եյին և ստանում են 3, 4 տոնն և նույնիսկ ավելիք բամբակ մեկ հեկտարից։ Միաժամանակ պետք են նշել, վոր նույն ֆերզանի հովտում բամբակի վնասատուներ չատ քիչ են պատահում։ Յեզ բամբակի այնքան հայտնի թշնամին, ինչպիսին եւ կնճուղի թրթուռը, պատահում եւ միայն հատ ու կենա և վոչ մի գործնական նշանակություն չունեն<sup>9)</sup>։

Մյուս կողմից, Անդրկովկասի, մասնավորապես Ադրբեյջանի մէ քանի ըրջաններում, բամբակի բերքը մեկ հեկտարից հաղիս կես տոննի յէ հասնում, իսկ յերբեմն և ավելի քիչ։ Յեզ ահա այստեղ միաժամանակ նկատվում եւ չափազանց իսխան բազմացում, յերբեմն վոչ միայն առանձնակարգ, այլ և յերկրորդական և պատահական վնասատուների, իսկ վերևում հիմլած բամբակի կընդուղի թրթուռը, վորոշ ժամանակ առ ժամանակ բառացիորեն ավելածություններ եւ գործում այստեղի բամբակի արտերում։

\* ) Այնտեղ դրությունն այլպես եր պատերազմից առաջ, սակայն պատերազմի պատճառած անհաջողությունների և ցնցումների հետևանքով, բամբակի մշակությունը վորոշ չափով ընկալ։ Ակսեցին ունեղ կերպով բազմանալ և վնասատուներ, բայց վերջին տարիներին բամբակագործության վերականգման հետ, վնասատուների գերին անպայմանուրեն պետք եւ աննշան դառնա։

չեն փերացնում հողը կամ անում են շատ անխնամ՝ 1—2 անդամ-  
մից վոչ ավելի. իսկ մոլախոսերի գեմ փոխանակ անխնա կավե-  
տու, մասձում ե, վոր նրանք... ողբակար են, վորովհետեւ իրը  
թե շվաք են անում հոգին և չեն թողնում, վոր նա չորանա: Այս  
ձեւի վերաբերմունքի հետեւանքով, արտօնութիւնը բաժակի ցանքերը  
սովորաբար այնքան բաժբակի ցանքի տպալորություն չեն թող-  
նում, վորքոն անսովոր կերպով փարթամ զարգացած մոլախո-  
տերի, իսկ արդ ցանքերի բերքը, կարելի յէ առել, խայտառակ  
կերպով ցածր ե, և մեր Միության տեսկատիլ արդյունաբերության  
շահերի անսակետից բոլորովին անթույլատրելի, վորովհետեւ դա  
վերջ ի վերջո վոչ թե բաժբակի մշակություն ե, այլ հողն ան-  
նպատակ վաշնչացնել և ջրի անարդյունութեան ծախս: Իսկ մինչդեռ  
այստեղ չի կարելի դանդատվել հողի և կիմայի գեմ, վորովհետեւ  
նույն Անդրկովկասում կան ավելի կուլտուրական տնտեսություն-  
ների բներ, վորոնց ստացած բերքը քիչ ե յետ մնում Միջին Ա-  
սիայի բերքերից: Իսկ կիման այստեղ կարելի յն համարել ավելի  
բարեհաջող բաժբակի մշակության համար, քան նույն Միջին Ա-  
սիայում, վորովհետեւ առաջին աշնան ցրտերն Անդրկովկասում  
վոչ պակաս, քան մեկ ամիս ուշ են վրա հասնում, համեմատած,  
որինակ, վերեւում հիշված Ֆերգանի հովտի հետ:

Անդրկովկասցի բաժբակացնը չստանալով բաժբակի լավ  
բերք, դրա փոխարեն տեսնում ե իր դաշտում մոլախոտերի հա-  
րուստ բերք և ավելի շատ քանակությամբ ամեն տեսակի վնասա-  
տուներ: Այսպես որքինակ, նույն բաժբակի կնդուլի թրթուռը,  
վորն իբրև բաժբակի վնասատու՝ Ֆերգանում գոյություն չունի,  
Անդրկովկասի մի քանի շրջաններում առանձնապես բարենպատ-  
պամաններ ե գտնում իր մասսայական բազմացման համար իսկ  
բաժբակի դաշտերը, վորոնց հողի մեջ կան այդ վնասատույի  
հարույակները, ձմեռը մնում են չվարած, գարնանը թիթեռները  
ժամանակ են ունենում դուրս գալու հողի միջից, մինչև, յերբեմն  
ուշացող արտը ջրելը և նույնպես ուշացած ու անխնամ կատար-  
ված վարը: Իսկ յերբ ամառն ե դալիս և թրթուռների յերկրորդ  
սերունդը, այսինքն հետորդներն առաջին սերնդի, այն թրթուռ-  
ների ու թիթեռների, վորոնք մնալու ելին այդտեղի ընդարձակ և  
խիտ մոլախոտերի վրա (մայիսին—հունիսին), տեղավորվում ե  
արգելն բաժբակենու վրա, ապա և այստեղ շատ քիչ բան ե խան-

գարում նրանց՝ անարդել կասարել իրենց ձևափոխությունը, վարովհետև ցանքերի հողը, ինչպես վերևում նշվեց, համարյա չի փխրացվում և հարսնյակները ժամանակ են ունենում դառնալու թիթեռներ, վորոնք աջող կերպով հողի միջից դուրս են դաշին նրա մակերևությունը: Բացի այդ, վաս մշակվող, թույլ և հյուծված բամբակներն չի կարող կնդուղի վորդի հասցրած վնասավածքներից կորցրած պտղատու որդանները փոխարինել նորերով և նրա վրա մնում ու հասնում են շատ քիչ քանակությամբ կնդուղներ:

Տամբակի կնդուղի թրթուռի մասսայական բազմացման յինդրում մենք բոլորովին այլ պատկեր ենք տեսնում վերևում Նիշված Ֆերդանում: այնտեղ բամբակի հողը փխրացվում ե, այնպես վոր շատ քիչ հարսնյակներ կարողանում են անպնառ մնալ, ապա և, յեթէ մնում ել են կենդանի, միեւնույն ե, ջրելուց հետո նրանք կազում են ցեխի հետ, այն անցքը, վոր թրթուռը պատրաստել եր թիթեռի դուրս գալու համար, քանդվում ե և նրանք վերջի վերջու չեն կարողանում հողի յերես դուրս գալ: Թրթուռների առաջին սերունդը մասսայական քանակությամբ զարդանալու տեղ չունի, վորովհետև արդեն առված ե, դաշտերում, կամ նրանց մոտիկ տեղերում մոլախոտեր համարյա չկան: Վերջապես, նույնիսկ, յեթե բամբակենու վրա մեկ-յերկու թրթուռ յերեացին և վնասացին մի քանի հաս կոկոն և վարսանդ, ապա ուժեղ և առողջ բույսն իսկույն կորցրած պտղատու որդանները կփոխարինի նորերով:

Ամբողջ վերոհիշյալից բոլորովին պարզ ե, վոր բամբակենու այս կամ այն վնասատույրի յերեալը կախված ե, վոչ թե նրանից, վոր մենք նրա զեմ չենք կովզում, այլ հետեւանք և բամբակի դաշտի այս կամ այն կերպ մշակելու:

Այդ պատճառով փորձենք պարզել, թե ի՞նչպես պետք և մըշակենք մեր բամբակի արտերը, վորպեսզի նրանց վրա ստողծվեն շատ ավելի քիչ բարեհաջող պայմաններ բամբակի զանազան վնասատուների մասսայական բազմացման համար մեկ կողմից և ապահավվի բամբակի լավ բերքը մյուս կողմից:

Տամբակի հոգի վարը և ցանքսից առաջ ջրելը

Յե՞րբ պետք ե կատարել բամբակի հողի վարը և ցանքսից առաջ ջրելը: Պարնամնը, մեծ մասամբ միայն մայիսին, ինչպես այստեղ անում են, թե՞ մի ուրիշ ժամանակ:

Նախ, բամբակի ցանքի համար նշանակված, բայց աշնանից շվարված հողեցը հնարավորություն են տալիս, վոր բարեհաջող կերպով ձմեռեն թե հողի վերին չերտում հանգուսացող լինաստու թիթիների հարսնյակները (բամբակի կնդուղի թրթուոի և կարագրինայի) և հողի մեջ ապրող կտրող թրթուոները (ազգատիզը), այլ և, վերջապես, բաղմաթիզ լիիները և վոստայնային տիգերը (չոռը), վորոնք ձմեռը տեղավորվում են զանազան, դեռ կանաչ մուսխոտերի վրա, յեր առաջին աշնանային ցրտերից՝ բամբակենին արգեն մեռել և Յերկրորդ՝ այդ իսկ գաշտում բարեհաջող կերպով ձմեռում և մուսխոտերի այն կամպանիան, առանձնապես կոնզարմատներ ունեցող, վորը հետո ամառն այնպես փարթած կերպով աճում և այսուղի բամբակի արտերում։ Յերբորդ՝ չվարած — թողած հողը նստում և, արորիում և արածող տավարի կողմէց և կանուխ զարնանը կորցնում և բավական խոնավություն գոլորչիացնելու միջոցով, ապա յերր, սովորաբար մայիսին, առաջին անգամ ջրվում և (արաթ), այն ժամանակ դաշտի վարն ավելի յի հետաձգվում — ուշանում և վոազ-վասպ վարած հողը ժամանակ չի ունենում հասունանալու՝ բամբակ ցաներու համար, իսկ ցանքն իր հերթին նույնուն սովորաբար ուշանում և այդ պատճառով։

Այդպիսի ուշ ցանքսի հետևանքով, բամբակենու կոկոնակալելու ու ծաղկելու նույնպես ուշանում և զուգադիպում և բամբակի կնդուղի վորդի յերկրորդ սերնդի թրթուոների մասսայական յերևալուն և վոստայնային տիգի ուժեղ բաղմանայուն։ Ուշանում և, վերջապես, և կնդուղների բացվելու և հում բամբակի հավաքելու ժամանակը։

Այս բոլորից խուսափելու համար անհրաժեշտ և բամբակի հողի վարը կատարել աշնանը, նախապես դաշտի յերեսից համացելով նախորդ բներքից մնացած ցողունները, տերևները և այլն։ Այդ վարը պետք ե անել առանց նախապես ջրելու, վոչ պակաս, քան 15—20 սանտիմետր (4 վերչ.) խորությամբ, խոշոր կոշտերով, վորի համար պետք ե հանել գութանի դանակը և դրանից հետո չփոցինել։ Ապա ձմբանը, առաջին սառնամանիքներն սկսելուց առաջ վարած արտի մեջ են բաց թողնում ջուր, աշխատելով, վոր հողը հավասարապես թրթի, այլ և հիշյալ կոշտերը ջրով հաղենան, վորպեսզի հետո այդ սառչելով վոչնչացնի կոշտերից

մեջ ձմելը մոլախոտերի արժատաները և վեասատուներին։ Այս  
մեռվ ջրված արտերը մի կողմէց մեծ չափով խոնավություն  
հավաքում, մյուս կողմէց՝ հողը, կոշտերը սահմալու և հողմահա-  
թության յննթարկվելու հետեւանդուի, անպայման լավանում է։  
Աղա դաբնանը, բամբակի ցանքան անելիս վոչ մի կարիք չկա նո-  
րից ցանքոից առաջ ջրելու և ազատ կարելի յե դեռ ապրիլի վեր-  
ջին սուանալ համահավասար ծիլեր, յնը այն դաշտերը, վորոնց  
գարնանային (մայիսյան) արաթի յնն թողնված, դեռ սպասում  
են ջրի։ Հարկավոր չե նաև դարնան այդ ժամանակ նորից խոր  
վարել բամբակի հոցերը, այլ, բավական և վոչ խորը փինըացնել  
նրանց մակերեսը թեթև գութանով, կամ նույնիսկ ափացեազոր  
փոցիսերով։ Այդ փինըացումից հետո անհրաժեշտ է կոշտերը ջար-  
ուել և մոլախոտերի արժատաները զիզ-զադ ու զսպանակավոր փոց-  
խերով զուրս հանել։

Ցամք։ — Եեթե հողը վարդած և աշնանից, ջրված և ձմեռը  
և այդ պատճառով իր մեջ ունի խոնավության բավական մեծ պա-  
շար, ապա թեթև գութանով և ափուեյսմոր փոցիսով մշակելուց  
հետո, բամբակի ժամանակին ցանք կատարելիս վոչ մի զժվարու-  
թյուն չե ներկայացնում։ Ինքնին հասկանալի յե, վոր պետք և  
մնի անպայման շարքացանք, ցանվի մարկերի ուղղությամք,  
վորպեսզի գուրս յեկած ծիլերը լինեն ուղիղ և զուգահեռ շարքե-  
ռով։ Իսկ առողջ ծիլեր և ապա առողջ ու ուժեղ բամբակենիներ  
ունենալու համար անհրաժեշտ և ցանել լիքը և առողջ սերմեր,  
հավաքված այն ցանքերից, վորոնք անցյալ տարի ամենից քիչ հն  
տուժել վնասատուներից։ Իսկ շաղացանքը բոլորովին թուլլատրե-  
լի չե։ Ել ավելի թուլլատրելի չե բամբակի ցանքից անմիջապես  
հետո հողը ջրելը (այսինքն, տեղական լեզվով սպասուվար), վորը  
դործադրվում է Անդրկովկասի մի քանի մասերում։

Բամբակի արտի խնամքն ու մշակումը ծիլերը դուրս գալուց  
հետո մինչև թերքի հավաքելը։ — Եերբ կերևան բամբակի ծիլերն  
ու մատազ բույսերը, իսկ միաժամանակ և, իշարկե, զանազան  
մոլախոտերի անխուսափելի ծիլերը, անհրաժեշտ և արտի առա-  
ջին փինըացումը և սեհրակացումը կատարել ձեռքով, այլև քաղ-  
հանել մոլախոտերը ձեռքի թոխիներով թե շարքերի վրայից և թե  
շարքամիջի տարածությունից, աշխատելով վոչ միայն կորել,  
այլ և պոկել — զուրս հանել նրանց արժատաները։ Իսկ յեթե մո-

բախուսերի վրա կա, որինակ, լվիճ, առաջ, վերպետողի նոր կը տրամած և չորտացած մոլախուսերի վլայից բամբակենու վրա չանցնի, անհրաժեշտ և քաղհանձնելու ժամանակ նրանց համագել փոցիսավ կամ 14 թաթանի կուլտիվատոր փոցիով և անմիջապես հեռացնել դաշտից : Իսկ յեթե հողի մեջ աղբուափիք թրթուռներ շատ կան, բոլ մոլախուսերի վրա խաւալսկան մորեխի մեծ քանակությունը թրթուռներ, այդ դեպքում, քաղհանձնից հետո իսկույն ցանքով վրա փռում են թունավորված զրատիչ նյութեր<sup>9</sup>) և վոչ մի դեպքում չեն հետաձգում բամբակենու ծիլերի քաղհանձնին ու սեհրակացնելը, վորպեսիք քաղհանձնած մոլախուսերից վնասատուները չանցնեն բամբակենու վրա : Իսկ յեթե հիշյալ վնասատուներից շատ կան, սկզբում քաղհանձնում են, առաջ ցրում են դրամիչ նյութը, յերբ նյութի աղղեցությունը պարզուում է, սկսում են սեհրակացնել բամբակել ծիլերը :

Մոլախուսերի առաջին քաղհանը կատարելուց հետո անհրաժեշտ ե միաժամանակ և փիսրացնել արտի յերեսը, փորանողի խոնավությունը լավ պահպի հողում : Մի առ ժամանակ հետո 20—25 որից), այդ փիսրացումը և զուգընթաց քաղհանն ու մոլախուսերին դաշտից հեռացնելը՝ նորից են անում՝ նախատակ զնելով հողի մակերեսի ուժեղ փիսրացման միջոցով ամելի յերկար ժամանակ պահել նրա մեջ հավաքված խոնավությունը և ուշացնել տուածին ջրի ժամանակիը, վորպեսով բամբակենին խոնավությունը հավաքելու համար աշխատի ամելի յերկար և ուժեղ արմատներ զարգացնի, ի նկատի ունենալով, վոր հետազում (հուլիսին — սպոտոսին) մի կողմից բույսերն սկսում են ուժեղ կերպով դուրսիացնել իրենց միջի ջուրը, մյուս կողմից՝ հողի խոնավությունն ել ջիչ և լինում, ուստի և բույսն ստիպված և խոնավությունը հազարել ամելի մեծ մակարդակից : Հակառակ դեպքում, բամբակենու հողից վեր և հողի տակ զտնվող մասերի միջև հավասարակշռությունը կիսանգարվի, և բամբակենին ստիպված կլինի ուժեղ կերպով զարգացնել և դուրս տալ իր պատղատու որդուները (կոկոններն ու վարսանիները) :

<sup>9)</sup> Գրամփէ նյութը պատրաստվում է 32 կիլո թեփից կամ բամբակի փուռայի այտուրից, վորը թրչվում և մկնդեղաթթվային նաստիումի լուծույթով (1 և կես կիլ. մկնդեղաթթվային նաստիումը լուծված մեկ դույլ (12 լիտր) ջրի մեջ) :

Առաջին ջուրը, ինչպես արդեն ասվեց, վորքան հնարավոր է, ուշ են անում, իսկ ջուրն արտի մեջ անցնելու համար բգլիցով ակոսներ են բաց անում շարքերի միջի տարածության վրա և տպա այդ ակոսները ծածկում են 14 թաթանի կուլտիվատոր փոցիով կամ ծայրահեղ դեպքում, սովորական հինդ թաթանի



Հինդթաթանի պլանետ կուլտիվատոր :

պլանետով : Զրելու ժամանակն իմանում են բամբակի տերևների պատշաճից, վորը ջրի պակասության դեպքում դառնում ե մութ կանաչ և բացի այդ, տերևները կախ են ընկնում, կարծես թե թառամում են որիտ շող ժամանակը և յերեկոյան դեմ, Միջին Աստիայի բամբակացանների արտահայտությամբ՝ «բամբակն այրվում ե» : Ցեթե գիշերը տերևները նորից բարձրանում են և առավոտյան դեմ ուղղվում են, այդ գեպքում դեռ կարելի յե չըրել. բայց յերբ գործն այստեղ և հասնում, վոր տերևները և՛ գիշերը չեն ուղղվում, ասպա այդ նշանակում ե, վոր կրիորիկական մոմենան արդեն հասել ե և անհրաժեշտ ե իսկույն ևել ջրել. իսկ յեթե տվյալ մոմենտում ջրել հնարավոր չե, պետք ել լրացուցիչ կերպով արտը վիխրացնել: Իհարկե, այսպես արհեստականորեն ջրելն ուշացնում են միայն մայիսին և հունիսին: Իսկ յերբ առաջին ջրից հետո բամբակենին կսկսի ծագել և կոկններ կազմել, այն ժամանակ, իհարկե, պետք ե, ընդհակառակը, վոչ միայն տաշ

նրան ամբողջ անհրաժեշտ ջուրը, այլ և հող տանել հողի խոնա-  
 վուրյունը պահպանելու մասին՝ արան ուժեղ կերպով փխրացնե-  
 լով և քաղհանելու միջոցով՝ հեռացնելով բուր մոլախտները,  
 վորոնք հանդիսանում են խոնավության գլխավոր գոլորշիացնող-  
 ները։ Մյուս կողմից, վորպեսզի ավելորդ խոնավությունից բուր-  
 սերը և դրա հետեանքով պատղառու որպահները թույլ չը-  
 պարզանան, անհրաժեշտ և նաև չափից դուրս չառ չըրել  
 և ջուր անել խսկապես անհրաժեշտության դեպքում, դատելով  
 տերեւների գույնի մթնելուց։ Ջուրը տնտեսորեն ծախսելը վոչ  
 միայն բաժբակաղործության հիմնական կանոնն է, այլ և ընդ-  
 հանրապես յերկրագործության, վորովհետև չառ առաս ջրելու  
 հետեանքով, մի կողմից առաջանում են ճահիճներ և զարգանում  
 և մալարիա հիվանդությունը, մյուս կողմից՝ հողերը դառնում  
 են աղի և բոլորովին անպետք՝ հետաղայում բամբակի մշակույ-  
 թի համար։ Վոռողելու, ջրի տնտեսման տեսակետից, ցանկալի  
 չե ջուրը մեծ հոսանքով բաց թողնել արտերի վրա, այլ հասա-  
 տապես խորհուրդ և արվում՝ ջուրը բաց թողնել բարակ հոսան-  
 քով։ Այդ նպատակի համար, ինչպես հայտնի յէ, հողամասի գրյ-  
 խավոր առվից (նկ.) սկզբում անց են կացնում նրան զուզահո-  
 յերկրորդական ջրող առու, ապա, յեթե այդ առուն չառ յերկար  
 և զուրս գալիս, նրանից իր հերթին անց են կացնում ավելի կարճ  
 և բարակ առվակներ ամեն 10—15 շարք բամբակի համար մեկ  
 հատ, վորոնցից բաց են թողնում ջրի փոքր հոսանքներ, վորոնք  
 կամաց-կամաց ցած են հոսում շարքերի միջով և առտիճանաբար  
 ձեզում հողի մեջ՝ նախապես բացված ակոսների միջոցով։ Հե-  
 շալ յերկրորդական ջրող առուն զնում և հողամասի բարձր կե-  
 տերով, իսկ շարքերը և ջրելու ակոսները զասավորվում են կամ  
 սոլզահայաց, կամ նրա հետ փոքր անկյուն կաղմելով։ Զրելու-  
 ակոսները հողամասերին հորիզոնական ուղղությամբ տանելը,  
 ինչպես այդ կատարվում ե Միջին Ասիայում բամբակը թժբերով  
 մշակելիս, բոլորովին հարկավոր չե, վորովհետև յեթե ջրի հո-  
 սանքը փոքր ե, յերբեք ել հողը լվացվել և ներքև քշել չի կա-  
 բող։

Միջարբային տարածությունը 14 թաթանի կուլտիվատոր-  
 փոցխով կամ ծայրահեղ դեպքում 5 թաթանի պլանետով փխրաց-  
 վում և մինչև այն ժամանակ, յերբ բամբակենիները կսկսեն իրար

կպչել և միջարքային տարածությունն ամբողջովին ծածկել։ Դրանից հետո, իհարկե, մոլախոտեն արդեն հնարավորությունը շահնեն բարձրանալու, իսկ մյուս կողմից՝ բամբակով ծածկված հողն ավելի քիչ և չորանում և կորցնում իր խոնավությունը։

Համենայն դեպս, բամբակը ջրելու և միջարքային տարածությունը մշակելու ժամանակ միշտ պետք են նկատի ունենալ վերեւում հիշված համաստակշուրթյունը բամբակենու արմատների և վերերկրյա մասերի միջև, աշխատելով հողի մեջ խոնավության պաշտը համարել ճմեռը կամ վաղ գարնանը՝ ցանքսից առաջ ջրեւում միջոցով, իսկ այսուհետեւ ջրել այնքան, վոր բավականացնի ուժեղ գոլորշխցման և տերեների ու մյուս վեգետատիվ և պըտղատու որդանների միջոցով խոնավության կորուստի շրջանում՝ հուկիսի և ոգոսառսի ընթացքում։ Դրանով այս կամ այն չափով կանխվում և կորենների և վարսանդների մասսայական թափվելը, վոր սովորաբար նկատվում և այդ ժամանակ։

Ի միջի այլոց, այդ ամիսներին՝ հուլիս—օգոստոսին սկսում են մասսայութեն յերեան գալ և բազմանալ բամբակի ամենահայտնի վնասատուները, հատկապս կնդուղի վորդը և փոստայնային աիզը (այլև սովորաբար կարաղընան), այդ պատճառով հենց այդ ժամանակ բամբակին փչում են ծծումբ և մկնդեղաթթվային կալցիում։

Սկսած ոգոսառսի յերկրորդ կիսից, բամբակի ջրելը բոլորովին դադարեցնում են, վորպեսզի բույսերը, պտղատու ճյուղերի փոխարեն աճող տերեններ չտան։ Իսկ յերբ կսկսեն բացվել վնդուուները, այդ ժամանակի բամբակի համարելը (չանաքը) չպետք է շատ ուշացնել և հետաձգել, ինչպես այդ յերեամն արվում ե, վորդան հնարավոր և շուտ, վորպեսզի առաջն և յերկրորդ համարը ժիասին կատարվի։ Այդ հետաձգելու հետեանքը լինում ե նախ այն, վոր յերկար ժամանակ արևի, քամու, յերեամն անձրևի տակ մնացող բամբակի թելը բացված կնդուղների մեջ սկսում և փշանալ այն մտքով, վոր նրա ծայրերը մեռնում են (մեռած թել) և առաջ հետապայում գործվածքներ պատրաստելիս՝ ներկ չի ընդունում։ Իսկ յերկրորդ՝ յերկար ժամանակ բամբակին առանց հավաքելու թողնելիս՝ յենթարկվում ե վտանգի շիրայի կողմից, այսինքն՝ կեղտոտավում և բամբակի լվիճի քաղցր արտաթորությանը, վորն սկսում և յերեամն ուժեղ կերպով զարդանալ հենց

առարկա այդ ժամանակ մասսայութեն: Վերջապես, մոլոխուերով ծածկված բամբակի աղտոքում վտանգ կա, վոր բարձրակի կնգուռ զեց գուրս յեկած թելերը կաչեն մոլախուերի կպչուն և ծակող սերժերին:

Ահարկե, ավելի պետք եւ շաապել բամբակը հավաքել մինչեւ ցըսերն սկսելը, վորովհետեւ մեռած և չորացած ծաղկակիցների ու տերենների փշտանքները խառնվելով բամբակին՝ կեղտուած են այն և բաղական նվազեցնում թե՛ բամբակի և թե՛ նրանից պատրաստված թելի վորակը:

\*\*\*

Ահա բամբակի մշակման այն յեղանակները, վորոնց միջացավ մի կողմից հնարավոր և ստանալ առողջ, ուժեղ և այս կամ այն վնասատույի հասցրած վնասվածքներին դիմացող բամբակնենքներ, իսկ մյուս կողմից՝ բամբակի ցանքերում ստեղծվում են այդ վնասատույների մասսայական բազմացման համար անբարեհաջող պայմաններ: Խակ ընդհանուր առմանը, այդ յեղանակները լիովին համապատասխանում են այն յեղանակներին, վորը խորհուրդ են տալիս գյուղատնտեսները՝ բամբակի առավելագույն բներքն ստանալու համար: Հետեարար, վորքան լազ մշակվի բամբակի ցանքը, այնքան քիչ վնասատուներ կլինեն և նրանց վնասն ել քիչ էլլինի: Վորքան մշակությունը վաս ե, այնքան ավելի շատ վնասատուներ կլինեն և ավելի շատ վնասներ կհասցնեն բամբակացանին:

A 1620





18  
19  
20  
21

1



ԳՐԱԸ 10 ԿՎՊ.

(034)

ЦЕНА

1620